


86
1773
1898

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ Կ գրութիւն
պիտի Կ ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դ. 80
» վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ծրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղուած նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

“ԱԶԳԻՆ ԴԵՄ,”

Եթէ եղիպտոսի մէջ լրագրական օրէնք-
ները նուազ մեղմ ըլլային քան ինչ որ չեն,
և մամուլի ազատութիւնը ենթարկուած ըլլար
այն անտեղի խստութիւններուն որոնք կը տի-
րեն միապետական երկիրներու մէջ, ապահո-
վապէս Փարոսը մինչեւ հիմա չատնոց խա-
փանել տուած պիտի ըլլային այն հինգ-վեց
հայերը որոնք իրենց ափին մէջ ունենալով
Դաւիթի ազգային վարչական բոլոր գործերը,
լրագրի մը հրատարակման ու քննադատու-
թիւններուն չեն հանդուրժեր:

Պիտի վարանէինք այս համոզումը գոյա-
ցնելու և հրապարակելու, — այն բնական
հակումով որով մարդ գիտարար կուզէ հաւ-
տալ տխուր իրողութեան մը, — եթէ մեզի
փոխ տրուած տպագրական մամուլին գրաւ-
ման ու վաճառման գաղափարին յաջորդած
չըլլար աւելի ցաւաւոր ձեռնարկ մը, այն է
Փարոսին տասնմէկ ամսէ ի վեր հետեւած
ուղղութիւնը բոլորովին հակառակ գոյներով
ներկայացնել բարձրաստիճան անձնաւորու-
թեան մը զոր ամենքս ալ կը յարգենք ոչ մի-
այն իբրեւ պետը այստեղի հայութեան, այլ
և իր ուղղամիտ ոգիին ու աղնիւ զգացում-
ներուն համար: Նիւթականին հետ՝ բարոյա-
կան չհարուած մըն ալ տալ կուզուի մեզի,
գիտնալով անշուշտ որ աւելի կարեւորութիւն
կուտանք երկրորդին քան առաջինին: Հարըս-
տութիւնը, ընկերական դիրքը չեն որ այս
նկատումը կը ներշնչեն մեզի, այլ այստեղի
հայութեան ամենէն նեղ վայրկեաններուն
մէջ ընծայուած մարդասիրական օժանդա-
կութիւնը, աշխատանքը, հոգածութիւնը,
բան մը զոր ուրիշ միջավայրերու մէջ և հոս
իսկ զլացող եսասէր հարուստներ շատ տե-
սած ենք:

Արդ, չենք իրար բնաւ հանդուրժել որ
այսպիսի պատուական հայու մը միտքին մէջ
հաստատութիւն գտնեն մեր հակառակորդ-
ներուն յերկրանքները, թէ Փարոսը ազգա-
փնա լրագիր մըն է, թէ Առաջնորդարանի
հասցիներուն կը փնտսէ, և այս և այն: Եթէ
օտարի մը, զօրաւոր օտարի մը երթային գան-
գաւիլ, երեսնիս մէկ կողմ պիտի դարձու-
նէինք ըսելով «Դատարան գացէ՛ք»: Պարագան
տարբեր է սակայն: Այս տեսակ միջադէպներ
կրնան վերջ ի վերջոյ յանգիլ ձանձրոյթի մը,
գիտնութեան մը, որոնք անախորժ հետե-

ւանք ունենան. կամ աւելի որոշ խօսելով,
այն անձնաւորութիւններ որոնց գլուխը կը
ցաւցունեն շարունակ սուտ ու սխալ տեղե-
կութիւններով, գուցէ վիրաւորելն ու քաշ-
ուլն տեղական ազգային գործերու վերին
հսկողութենէն: Ահա թէ ինչու բացառիկ կա-
րեւորութիւն մը կրնայենք ազգային շրջա-
նակի մէջ մեզի դէմ եղած տրտմանը:

Քիչ մը աւելի քաջութիւն կը սպասէինք
մեզ հակառակորդ խմբակէն. քսութիւնը ու
խեղաթիւրումը անզօր կը մնան լրագրի մը
համար, վասն զի լրագիրը աշխարհի ամենէն
համարձակ գործերէն մէկն է. իր գործները
մէջտեղ են, իր պաշտպանած դատը, իր
քննադատած արարքները որոշ կերպով մատ-
նանիլ կըլլան: Մարդու մը համար կրնայ ըս-
ուիլ թէ ծածուկ կերպով այս ինչ բանը կը-
նէ. լրագրի մը համար չի կրնար բուռիլ թէ
«սանկ բաներ գրեր է եղբեր»: Փարոսին 85
թիւերուն հաւաքածուն այդ պարոններու
տրամադրութեան ներքեւ կը դնենք. թո՛ղ
պարտեն, գտնեն յօդուած մը, պարբերու-
թիւն մը, տող մը որ ազգին դէմ լըլայ, ինչ-
պէս կը սահմանեն իրենց սրտին ցաւը, և
ապացոյց ի ձեռին ներկայանան ուր որ կը
դիմեն հիմակ տարտամ գանգատներով՝ միտք
պղտորելու համար միայն:

Եթէ լրագրի մը համար ազգին դէմ գրել
է՝ զգացունել թէ վարչութեան մը Սահմա-
նադրական շրջանը յաւերժական չի կրնար
ըլլալ, թէ ինքնակոչ ժողովականութեան դա-
րը անցած է. եթէ ազգին դէմ գրել է՝ պա-
հանջել որ Պատրիարքարանի հրահանգին հա-
մեմատ առաջնորդական ընտրութիւն կատար-
ուի, որուն ժամանակը եկած անցած է. եթէ
ազգին դէմ գրել է փափագ յայտնել որ
կնունքի, հարանիքի կամ թաղման համար ներ-
կայացող աղքատ հայերէն խղճամիտ սակա-
գին մը պահանջուի. և եթէ, վերջապէս, ազ-
գին դէմ գրել է՝ հակառակել որ մեր եկե-
ղեցիին մէջ թուաւոր ու վարձու թիկնաթու-
ներ զետեղուին, օ՛հ, այն ատեն մենք կան-
խաւ ինքզինքնիս դատապարտուած կը զգանք
ու կը խոստովանինք թէ Փարոսը իրա՛ւ ազգին
դէմ կը գրէ կոր:

ՅՈԳՆՈՒԹԻՒՆ

... խեղճ մարմին,
Հերիք մսի չարչարաններդ պօռաս,
Հերիք պարապ գալարումներդ ցաւազին
Շրագներու ետեւէ միտք, միտք անհաս:

Մութ գիշերներն հերիք անցրես անհուն,
Մութ գիշերները արցունքով արցունքոց,
Տե՛ս առեւտրեմ սրկար լոյսը նւազիտ,
Այլ չը բացուիր Արեւոյսը Յոյսերուն:

Սա չարչարուած՝ քու խեղճ գանգիդ հանգիստ տու,
Մէկ կողմ ձգէ անվերջ կոչերդ լալկան,
Ի՛նչ անուշ է առեւտրեմ լոյսը սրկուր
Հոգիներուն որ կը սպասեն յաւիտեան:

... խեղճ մարմին
Տառապանքիդ լրկումովը սրբուած,
Ի՛նչ փոքր քու խեղճ ցանկութիւններդ օղային,
Քիչ մը չորցուր խեղճ աշուրներդ միտք, բաց
Քեզ չը բացուիր Արեւոյսը Յոյսերուն...:
8 Յունուար 98 ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵԱՆ

ԿԱՄԵՆԱԼԸ՝ ԿԱՐԵՆԱԼ Ե

Ահա՛ ջիւղերուս դպած առած մը:
Եւ «իմաստուն» անկանը գուցէ տուած են
այն խելագարին որ մեծ բան մը ըրած ըլլալու յա-
ւակնտութեամբ այդ երկու բառերը բովէ բով է
գրած: Ապո՛ւշը:

Նախ չեմ սիրեր այն ամեն առածները որոնք
երկու բառով շինուած են. «Երանի՛ր զքեզ»-ը, օրինա-
կի համար: Սոցոմոն, որ այդ վճիռը տրածուած է, չատ
աւելի խելացի բան մը ըրած կըլլար ըստ իս, եթէ
փոխանակ առածներ չիւնելու՝ ութ հարիւր կիներուն
վրայ երկու հարիւր ալ աւելցնէր՝ կոր թիւի մը
հասնելու համար գոնէ:

«Երանի՛ր զքեզ»... է՛հ, ե՛տքը, ոչինչ:
Դպրոցական եղած ատենս գեղադրութեան
դասաւորու, իր ամսականը աւելցնել տալու նպա-
տակաւ անշուշտ, այդ երկու բառերը գրել տուաւ
ինծի՛ն ճիշտ գրով, զպրոցին պատէն կախելու հա-
մար՝ պարզեւարաշուքութեան օրը:

— «Երանի՛ր զքեզ» ի՛նչ ըսել է, հարցուցի իրեն
տղայական չքմեղութեանս մէջ, կարծելով թէ վար-
ժապետները աշակերտներէն աւելի բան գիտնալու
են անպատճառ:

— Ինքզինքդ ճանչցիր ըսել է, պարոն, պատաս-
խանայ այնպիսի չեղտով մը որ կարծես թէ Սոցո-
մոնին այդ յիշար բառերը աւելի հասկնալի պիտի
ըլլային ինծի՛ն աշխարհարարի վերածուելուն պէս:

Իրիկունը առաջին գործս եղաւ հայերի մը
առջեւ անցնիլ, տաճարաւէն խելագարին պատուէրը
բռնելու համար:

Է՛հ, ի՛նչ եղաւ ըսէ՛ք, ինքզինքս ճանչնալովս
Նախ գեղեցիկ ըլլալու գաղափար մը եթէ ունէի
ատկէ ալ վազ անցայ:

Ո՛ւր էին նուշի պէս աչքերս, կեռասի պէս շրթ-
ներս, դեղձի պէս այտերս — մրգավաճառի ամբողջ
խանութ մը վերջապէս:

Ատոնցմէ և ոչ մին ունէի ևս : Իրաւ է որ այդ պտղային մանրամասնութիւնները չունենալովս ոչ աչխարհք կը կործանէր և ոչ ալ կնասէր իմաստունին տաճարը :

Ձեզի համար այս այսպէս է, բայց մէյժն ալ ինծի՝ հարցուցէք :

Այն օրէն ի վեր որ վարժապետիս խօսքը բռնեմով փոխանակ հայելին՝ մազերս սանտրելու համար գործածելու, ինքզինքս ճանչնալու ծառայեցուցի, ահա այդ վայրկեանէն ջախջախեցի կեանքս, ուսանեցի ապագաս և յուսահատ ապրեցայ մինչեւ այժմ՝ որովհետեւ ես զիս չէի հաւանած, և երբ մարդ ինքզինքին չի հաւանիր, ա՛լ ինչ կապասէք անկէ :

«Ծանիր դքեզ» այդ խաղը մէկ անգամ կը լայանկէց ի վեր երբէք հայելին նայած չունիմ :

Սոցոմոն պիտի բարկանայ եղեր, որի՛ն հոգ, ութ հարիւր կնիկ առած ատենը անիկայ մարդու բան հարցուց :

Գալով «կամենալը՝ կարենալ է» ըսողին, ա՛ռ քեզի անբանին մէկն ալ :

Աշխարհաբասի վերածէ նոյն առածը և սա այլ լանդակութեան կը յանգիս «ինչ որ ուզես կը լայ» :

Եթէ այս ամեն առած շինողները ասոր պէս իմաստուն են, ուրեմն Այվազեան ասոնց հետ բաղդատմամբ պզտիկ աստուածութիւն մըն է, հաւատացէք :

Մէկ միւլին օրինակ տամ՝ ձեզի հաստատելու համար որ երբէք ուզած բաներէս և ոչ մէկը եւ ղած է, տեսէք :

Դպրոցը՝ դասարանին մէջ մինչեւ վերջը ուզած եմ ընկերներուս առաջինը ըլլալ և միշտ քսանը չորրորդը եղած եմ . . . 25 աշակերտի վրայ : 25եւ րորդն ալ համր էր խեղճը :

Կեանքիս մէջ շատ դառնութիւններ, հնայաթափութիւններ, վնասութիւններ ունեցայ, շատ բան ուզեցի և ոչինչ կրցայ ընել :

Բայց ամենէն շատ սիրոյ մէջ տեսայ թէ որքա՛ն յիմար բան էր այդ առածին վստահիլ :

Ասկէ տաս տարի առաջ չեմ գիտեր ո՛ւր հանդիպած էի աղջկան մը որ տարօրինակ ազդեցութիւն մը ըրած էր վրաս : Իրաւ է որ սիրոյ ինչ ըլլալը տակաւին աղէկ մը չէի գիտեր, բայց կը տեսնէի թէ զգացումներս արտասովոր թափ մը ստացած էին : Այդ աղջիկը տեսած օրէս արտօմակու եւ բուն նուազած էին, մարմինս քիչ մը նիւթարցած, միտքս տեսակ մը մոլորումներ կունենար, բանէ համ չէի առներ, թատրոնը, երգը, ընթերցումը, ամենքն ալ իրենց հմայքը կորսնցուցած էին. աշխարհք ինծի համար անոր պատուհանին առջեւ կսկսէր և երազներուս մէջ կը վերջանար :

Շարժուն մեքենայ մըն էի պարզապէս : Ոչ կըրնայի բարկանալ և ոչ ալ ուրախանալ, անտարբեր ամեն բանի, բոլոր լաւագոյն զգացումներս խոյս տուած էին ինձով :

Եւ այդ հոգեկան բայրայեալ վիճակիս մէջ կըզգայի թէ կը սիրեմ կրթն :

Թուրի վրայ, տասնըութ տարու, գեղեցիկ ըլլալէ աւելի համակրելի, ուսեալ, բարեկիրթ, զգալուն աղջիկ մըն էր Նինին :

Ձինքը տեսած ատենս կասկարմիր կը կտրէի, բերանը բանալուն պէս սիրտս բարախումներ կունենար — այդ բարախումները, առա՛ջ, այս օր ալ կզգամ՝ վախճանն ոտք սանդուխէ մը վեր ելլելէս ետքը. — երբ կը խնդար, խենդութիւն կուղար վրաս. երբ կը տրտմէր, անձնասպանութեան գաղափարներ միտքս կը պղտորէին : Ասո՛ք չե՞ն վերջապէս սիրոյ նշանները : Ըսելիք չկար, խենդի պէս, այսինքն ամեն մարդու պէս սիրահարուած էի իրեն :

Այդ օրը միտքս եկաւ իմաստունին խօսքը, «կամենալը՝ կարենալ է», հետեւաբար Նինի կինս պիտի ըլլար :

Օր մը սիրոյ աստուածը քովէ քով դրաւ դմեզ. այդ օրէն կսխառն ունէր ճակատագիրս :

— Ձեզի բան մը պիտի ըսէի, բայց չեմ համարձակիր կր, ըսաւ սիրոյս առարկան :

— Քաջութիւն, օրիորդ, մի՛ քաջուիք, ըսէ՛ք :

— Սիրահարած եմ, խենդի պէս սիրահարած : Քիչ մնայ սիրտս պիտի պայթէր :

— Աւստի՛, կուզէի գիտնալ թէ սիրածս նոյն զգացումը ունի՞ ինձ համար :

Ինքզինքս բռնեցի, և այդ հաճոյքը երկարելու համար, անմիջապէս չըսի իրեն — Հոգիս, այո կը սիրեմ, հոգեովս կը սիրեմ գրեզ, այլ՝

— Ան դոր կը սիրէք, փոխադարձաբար կը պաշտէ ու կը սիրէ դձեզ :

— Իրա՞ւ, հիմա կը մեռնիմ, անգամ մըն ալ ըսէք թէ կը սիրէ զիս, ո՛հ, որքան երջանիկ եմ, գիտէի թէ Արամը զիս կը սիրէ :

Այսօ՛ր . . . ես ինքնիրենս փեսայ եղեր եմ՝ խապար չունիմ, վա՛յ զլիսուս :

«Կամենալը՝ կարենալ է» . . . Սոցոմոնի ատենը թերեւս, բայց հիմայ . . . zut !

ՌԱՏԱՄԵՍ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԿԱՏՂԱՍՏ ԵՈՒՆԵՐԸ

Աստի՛ աշ իրենց վրայ խօսեցնել կուսան եւ անեղի յենի հաւնարի մեր այս օրուան Այժմեութիւնը անոնց նուիրելու, մանաւանդ որ այդ ինդիւրը սերս առնուրթիւն մը ունի հանրային կեանքի ապահովութեան հետ որով զբաղի՝ միւսողին ամենէն կարեւոր մէկ պարտականութիւնն է :

Վերջի սասնըհինգ օրուան մէջ սասնը հոգիէ աւելի խաճմունեցան կասողած շուներէ :

Միւսիսայն Գաճէ Էծրիսիէնի մէջ 7 հոգի, որոնց մէկը հայ, այդ դժբաղդոտեան հանդիպեցան, ինչպէս նաեւ Պ. Մէյնարաֆի, եւ խաճմոյ շանը սիրունիկն ու ասոր ապաստար :

Ներքին գործոց նախարարութիւնը այս դեպքէն ազդուելով՝ խիստ միջոցներ ձեռն առած է անոնց կրկնումը արգիւելու համար, հետեւաբար Գահիրէի կառավարիչը հրաման ստացած է քաղաքին բոլոր քաղաքիկ շուները անմիջապէս բռնաւորել սալ :

Անոնք որ իրենց շուներուն վրայ կասկած ունին պէտք է որ կենդանիներու հիւանդանոցը դրկեն կամ կանչել իսկ անասնաբոյժ մը :

Կառավարութիւնը որքան ալ նախագորշական միջոցներ ձեռն առած ըլլայ, դարձեալ ամեն անհաս պէտք է զգուշանայ կարելի եղածին չափ : Ուստի պարտք կը համարենք մեր ընթերցողներուն յանձնարարել՝ թող չսալ որ փողոցին մէջ տաք խաղան առանց հսկողութեան, ցրտակապ մը անցնեն իրենց սան շուներուն, եթէ ունին :

Անշուշտ այս ցաւալի դեպքերը քաղաքագոյն իշխանութեանց ուշադրութիւնը պիտի հրախրեն Բասթօրեան դրոշմաւոր դարմանատուն մը հաստատելու անհրաժեշտ պէտքին վրայ : Եւ արդէն միևնույն աշիմ այդ պէտք հոգաճուած ըլլալու եր, քանի որ նոյն իսկ Յունաստան՝ որ եգիպտոսի պէս տարին 125,000 ժրանք չի տար քաղաքներուն, քանի տակայն իր Բասթօրեան դարմանատունը :

200 ՈՍԿԻԻ ԹԱՂՈՒԱՍ ԳՈՒՄԱՐ ՄԸ

Փարոսի վերջին երկու թիւերուն մէջ կարդացի ծանուցում մը՝ Արարիկի Առաջնորդական Տեղապահ Հօր կողմէն առ Արարիկի ազգային ուղղեալ նամակի մը մասին :

Անշուշտ մեր հայրենակիցը ցարդ իրագէկ եղան այդ նամակի պարունակութեան. իմ կարծիքն է թէ, յորդոր մ'ըլլայ աղբատիկ մանկանց կամ որբերու աստարելու :

Իմ այդ կարծիքը յիշատակ մը կարծեցնէ յիս, իմ առջեւ կը ներկայանայ նմանօրինակ հանգանակութեան մը խնդիրը, որ սկսեալ է շուրջ 17 տարիներ

առաջ և դադարած 9 տարիներէ ի վեր, որմէ գոյացած 102 ոսկիի գումարը շահագործութեան դրուած էր Տիար Ս. Ե. ի մօտ, յանուն Արարիկի հայ աղբատիկ մանկանց դաստիարակութեան :

Երբ Ամեն. Մատթէոս Արարիկի առաջնորդութեան օրով այդ խնդիրը կը յուզուէր և Արարիկի Ազգ. Առաջնորդարանի կողմէն կը պահանջուէր այդ դրամը, Տիար Ե. դայն կը յանձնէր առ Տիար Մ. և առնուած մուրհակին մէջ հայ բառին ծայրը բողբոսկան հայ բառը կը կցուէր, որով Տիար Մ. կը հակառակէր այդ գումարը Արարիկի Առաջնորդարանին հրամանին յանձնելու, առարկելով թէ մասնաւորապէս բողբոսկան հայ մանկը, ունի կը պատկանի եւն. և այն միջոցին Արարիկի ձեռնհաս ժողովներու անկերպարան վիճակը վրայ հասնելով՝ այդ խնդիրը բարձի թողի կը լայար :

Նպատակս չէ խառնապահանջ ըլլալ զանազաներու բողբոսկան հայը լուսաւորչականէն, սակայն անհանդուրժելի է նաեւ, երբ անի յայտնի դրկանք մը տեղի կունենայ հայ մանկուոյն, որոց համար այնչա՛փ հոգաճու գտնուած են ո՛չ-բողբոսկան մեր հայրենակիցը. ի դէպ է ըսել թէ, այդ հանգանակութիւնը կատարուած ժամանակ Արարիկի բողբոսկան ազգայնոց թիւը ի Գահիրէ 3—4էն աւելի չէր, և հին մուրհակներուն մէջ, որք էթէ չեմ սխալիր Գահիրէի Առաջնորդարանի Գիւտնատուն մէջ ի պահ դրուած են, այդ գումարը միւսիսայն լուսաւորչական հայ մանկուոյն մասնաւորաւ չէ երբէք :

Չեմ յուսար թէ Տիար Մ. այդ հանգանակութեան արդիւնքը, որ այսօր հանդերձ տոկոսով 200 ոսկեոյ պատկառելի գումարին կը հասնի, հակառակի իւր նպատակին գործադրութեանը յանձնելու, երբ հայ մանկուոյն համար նորագոյն հանգանակութեանց պէտքը անհրաժեշտ դարձած է. ուրեմն անգամ մը ևս հրապարակ հանելով այս խնդիր, կը սիրեմ յուսալ թէ Ազգ. Առաջնորդարանը և Արար. կիցի ազգայինք պիտի ջանան այդ հանգանակութեան արդեանց անտող վիճակին վերջ մը տալու, որով իրական ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան որք և թշուառ հայ մանկուոյն :

ԱՂԲԱՍԻ ԿԱՏՂԱՍՏ ՄԱՆԿԱՍԻՆԻ ԲԱՐԵԱՍԸ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Իրերու արտաքին երեւոյթէն դատելով, ու առանց հաշուի դնելու անակնկալ միջամտութիւնները որոնք կրնան տեղի ունենալ այս կամ այն տէրութեան կողմէ, Թուրքիոյ և Պուրկարիոյ միջեւ պատերազմ մը մօտալուտ կերեւի : Երկու կողմէ ալ պատրաստութիւնները առաջ կը տարուին փութով. Թուրքիա զօրք կը համախմբէ սահմանագլխին վրայ, յայտնի համարձակ, մինչ Պուրկարիա լուռ ու մունջ կերպով կանխահոգ միջոցներ ձեռք կառնէ՝ ի հարկին ամբողջ բանակը շարժուն վիճակի մէջ դնել կարենալու համար : Միջերանցները զէնքով ու պաշարով կը լեցուին, ու ահագին ծախքեր կը լայն հիմակուց :

Երբ խնդիրը թուրքեպուրկարական պատերազմի մը պատահականութեան վրայ է, բնական է որ ուշադրութիւնները Ռուսիոյ կողմ կը դառնան թէ ինչ ընկալքի պիտի հետեւի : Իրաւ է թէ Չարին կառավարութիւնը մէկ կողմէ խորհուրդ կուտայ իշխանապետութեան՝ խոյս տալ հակառակութիւններն արժարծելէ, բայց միւս կողմէ իր Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ կը յայտարարէ թէ, համակերպելով Սուլթանին փափագին, կը հրաժարի առ այժմ պահանջիլ իր պատերազմական տուգանքի մնացորդը : Թեւեւ այս բարեացակամ տրամադրութիւն սապէս կը մեկնուի թէ Ռուսիա կը յուսայ, փոխադարձաբար, Եօրկիոս իշխանին ընտրելութիւնը յաջողուեն, բայց այլապէս մտածողներ կը ըսեն թէ անոր բուն նպատակն է դրամական դիւ-

ընթացին ընծայել թուրքիոյ՝ իր պատերազմական պատրաստութիւններուն հասնելու համար :

—Աթէնքէ կը հեռագրեն թէ թուրք զօրքերը, Վոլոսի մէջ, գիշերանց սպաններ են հայր Տալէճիօ անուն քահանան : Պրանսայի արտաքին գործոց նախարարը հրահանգներ ուղղեր է Աթէնքի և Կ. Պոլսոյ գետապաններուն այս սպանութեան առթիւ : Ապահովապէս Պ. Հանօթիոյ այս փութկոտութիւնը նոյն արգիւնքը կունենայ ինչ որ ունեցան հայր Սալվաթօրէի սպանման առթիւ ըրած այնքան ձեռնարկները :

—Կը յիշուի թէ մեծ տէրութեանց Կ. Պոլսոյ գետապանները հաւաքական ծանուցագիր մը պիտի ստային Դրան, 1896 օգոստոսի ջարդին ու կողոպուտներուն պատճառաւ իրենց հպատակներուն կրած վնասին հատուցում պահանջելով : Ռուսական գետապան Պ. Ջինովիէֆ այդ ծանուցագիրն ստորագրելէ առաջ Բեդրսպուրկէն հրահանգ խնդրեր է, և իր այս ընթացք կը մեկնուի իրեւ նոր նշան մը Ռուսիոյ հաճոյակատարութեան թուրքիոյ նկատմամբ :

—Երբեմն Տիգրանակերտի կուսակալ Է. Նիս փաշա, որ Հայաստանի ջարդերուն հետեւանօք պաշտօնանկ եղած էր ֆրանսական գետապան Պ. Գանպօնի պահանջմամբ, Պարսիայի կուսակալ անուանուեր է այս օրերս : Իսկ Պահրի փաշան, որուն անունը ծանօթ է մահաւանդ Մուսա պէյի դատէն ի վեր, և որ նոյնպէս պաշտօնանկ եղած էր անգլիական նախկին գետապան Սըր Ռիլիէմ Հոլայդի պահանջմամբ, Ատանայի կուսակալ անուանուեր է :

—Ռիւդէրի տեղեկութեանց նայելով, ֆրանսական և անգլիական կառավարութիւնները՝ հելլենական փոխառութեան երաշխաւորման պայմաններն իրենց խորհրդարաններուն ներկայացուցելէ ետք, ծանուցագիր մը պիտի տան Դրան՝ յայտարարելով որ պատերազմական տուգանքին առաջին մասնավճարն ընդունելուն պէս, պարտաւոր է մաս առ մաս ետ կանչել իր զօրքերը թեսալիաէն :

—Պ. Ջինովիէֆ արտօնութիւն խնդրեր է Դուռնէն՝ որ Նիֆօշա Ա. զրահաւորը և ուսական ուրիշ թնդանօթակիր մը անցնին Տարտանէլէն : Այդ նաւեր հիմակ Արշիպեղազոս կը գտնուին և Սեւ ծովու նաւարանները պիտի երթան՝ նորոգուելու համար : Ռուսիոյ գետապանը արտօնութիւն խնդրեր է նաեւ որ Սեւ ծովի ռուսական նաւատորմէն երկու զրահաւորներ Վոսիորէն անցնելով Արշիպեղազոս երթան, առաջիններուն տեղը բռնելու համար :

ՆԱՄԱԿ ԱՌԻՍՏՈՒԹԻՒՆ

Համակիր ընթերցող Փարոսի՝ ցաւով կը հետեւիմ ձեր մամուլի խնդրին :

Լրագրի բարեկամ ըլլալէ աւելի, իրեւ երեսփոխան զիտելով այդ տիտուր միջադէպը, կը զարմանամ թէ ըստ բաւականին տեղեակ չէք Առաջնորդարանի ներքին կանոնադրութեան որով սպառնալիս սեպհական որեւէ գոյք չի կրնար ծախուիլ առանց Երեսփոխանական Ընդհ. Ժողովոյ որոշման :

Հետեւաբար, վիստելու պատճառ մը չունիք. թերեւս ընդհանուր ժողովը նուազ անհամակիր գրեւոր ձեր թերթին բան մամուլապան ժողովը : Գահիրէ, 22 մարտ ԵՐԵՍՓՈՒՄՆ ՄԸ

ՆՇԱՆԱՌՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս կիրակի օր, ընթացող Երջանակի մէջ տեղի ունեցաւ Տիար Վառճապուհ Գալիագեանի նշանակութեամբ Օրիորդ Վարդիմէ Եսիրեանի հետ : Նոյնպէս Տիար Սեփիան Երեանի նշանակութեամբ Օրիորդ Գալիմիկ Զ. Մանուկեանի հետ : Մեր շնորհաւորութիւնները :

ԹԱՏՐՈՆ ԽՏԻՎԱԿԱՆ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԱԾՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ Ուրբաթ 25 Մարտ 1898 Երեկոյեան ժամ 8 1/2ին Ի ՆՊԱՍՏ

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՂՔԱՏԻԿ ՈՒՍԱՆՈՂԱՅ Բարեկամ աջակցութեամբ Տիկին Վերժինի Նուարդի, Տ. Է. Սանթրինի, Տ. Ժ. Բէնտաքի և Թատերական Ընկերութեան

ՅԱՅՏԱԳԻՐ

- ՄԱՍՆ Ա.
1. Պարպիւտ տը Սէվիլ (Արիա) Տիկ. Վ. ՆՈՒԱՐԴ
 2. Ոճիրի մը պատմութիւնը (Մեմախօսութիւն) Տ. Ժ. ԲԵՆՏԱՔԻ
 3. Զընկըրաք (Կասակերգութիւն) ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
- ՄԱՍՆ Բ.
1. Զէյպէք (Երգախառն կասակերգութիւն) ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
 2. Քաւալէրիա Ռուսթիքանա (Արիա) Տ. ՎԻՐԺԻՆԻ ՆՈՒԱՐԴ
- ՄԱՍՆ Գ.
1. Զէմիրէ (Ռօմանո Չուհանեանի օրհներէն) Տիկ. Վ. ՆՈՒԱՐԴ
 2. Զօր Նիքեա (Կասակերգութիւն) ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դաշնակց պիտի ածէ Տիար Է. Սանթրինի

Զինուորական Նուագախումբը պիտի նուագէ միջնորարներուն ազգային և եւրոպական կտորներ :

ԳԻՆԵՐ

Պէնեուար և Ա. Օթեակք զըշ. ողջ	250
Բ. կարգի Օթեակք	80
Թիկնախոռ	20
Սթալ	12
Վերնատուն	5

Տոմսակները կը ծախուին Ընթերցասիրաց ընկերութեան կեդրոնատեղին և ներկայացման իրիկունը թատրոնին կիւղէն :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիվը որ երկու օրէ ի վեր Մոնթազան կը գտնուի, այս իրիկուն Գահիրէ կը վերադառնայ : Ն. Բարձրութիւն յառաջիկայ շաբաթ առաւօտ ընդունելութիւն պիտի կատարէ Ապտինի պալատը :

—Նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի այս իրիկուն հացկերոյթ մը կուտայ Կիդիրէ Բալէսի մէջ :

—Հանրօգուտ շինութեանց խորհրդական Սըր Ռիլիէմ Կարաթէյն և ներքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Կօրսթ այսօր կը վերադառնան իրենց քննական պտոյտներէն :

—Պոլսոյ թերթերուն պաշտօնական բաժնին մէջ կը կարդանք. «Հայ Հռոմէական հասարակութեան երեսնելիներէն և Աղբըսանդրիոյ ծխախոտի գործարանատէրներէն Մատթէոս և անձնականէսֆէնտի չորրորդ կարգի Օսմանիէ պատուանշան տրուեցաւ» :

—Պ. Վիլքս, ջուրի ընկերութեան ընդհանօրէն, Գահիրէի մէջ կոյուղիներու հաստատման նկատմամբ նոր ծրագիր մը պատրաստած ըլլալով հանրօգուտ շինութեանց նախարարութեան պիտի ներկայացնէ ի մօտոյ :

ԱՅՍ ՕՐՈՒՄՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բարիք, 22 մարտ. — Երեսփոխանական ընտրութիւնները պիտի կատարուին մայիս 8ին :

Թրանսպիւնիթի ընկերութեան Վիլ քը Ռօմ շոգենաւը որ Մարսիլայէն Սլէէ կերթար, Միւսօրի մօտ ընկղմեցաւ : Նաւատիրներն և ուղեւորները ազատեցան :

Ս. Մերիկայի ու Սպանիոյ միջեւ ծագած խնդիրը կայուն վիճակի մէջ կը մնայ :

Լոնտոն 22 մարտ. — Պ. Կլաութօնի տողջական վիճակը մտահոգութիւն կը պատճառէ :

ԶԵԿՈՒՅՈՒՄ

Պ. Է. Պէնեանի ի նպատակ տրուելիք Մոմէ առ ձան շինողի ներկայացումը յետաձգուած է, առաջիկայ կիրակի գիշերուան :

ՆԱՄԱԿ ՊՈՄՊԵՆ


Պոմպեյէն մեր ստացած մէկ նամակէն կը բաղեցնէ հետեւեալ քանի մը տղերք որ իսուր գաղափար մը կուտան այդ քաղաքին արդի կացութեան վրայ եւ որ տանեկանութեան զուրկ չեն Հնդկաստանի գործերով հետաքրքրուողներուն համար :

Երկնային մի սոսկալի պատիւ և պատու հաս ըզմանդակ Հնդկաստանի վերայ, ինչպէս երբեմն Եգիպտոսի :

Մի կողմից սովի, միւս կողմից ժանտախտ, մի այլ կողմից սահմանագիւղի իրարանցումն ու շարժումներն, բոլանդակ երկիրը քանդուած են աւերակ են դարձնում բանալով ահագին ծախսերի նորանոր դռներ, սոսկալի ժանտախտի դաժան և հատու մանգաղներն աշխարհէ ձախից անյագաբար հնձում են մարդկանց կեանքն առանց երբեք խնայելու սեռին ու տեսակին, մանուկին ու ծերին, կնոջ ու տղան մարդին, հարուստին թէ աղքատին : Կեանքն իսկապէս ասած, անտանելի է դառնում, չկայ կեանք բառի բուն նշանակութեամբ : Վաճառականութիւնն կատարեալ մեռելային դիրք է ստացած, առեւտուրն եթէ իսպառ չէ դադարած բայց և այնպէս հոգեվարք վիճակումն է : Երթեւեկութիւնը քաղաքի մէջ պատճառաւ շատ նուազած և դժուարացած են : Ամենայն կողմ հիւանդանոցների թիւն աւելացած և հետեւաբար երկրի ծախսերն էլ քառապատկուած են : Բոլոր հիւանդանոցներն առանց բացառութեան, լցուած են հիւանդների մի ահագին և ստուար բազմութեամբ. ժանտախտից թէ այլ սովորական և պատահական հիւանդութիւններից օրական առ նուազն 300 հոգիներ մեծաւ մասամբ երկրականներ, ճանապարհորդում են դէպի հանդերձեալ աշխարհ : Անբաղդ հիւանդներն նայած իրանց հիւանդութեան տեսակին, դիմում են տարբեր հիւանդանոցներ և զետեղվում են յատկացեալ սրահներում, իւրեանց ցաւերին մի որ և է դարման գտնելու յոյսով և ակնկալութեամբ : Հիւանդների միօրինակ և մեռելային կեանքն շատերի համար, շատ շուտով զգալի և անտանելի է դառնում : Այդ կարգի հիւանդներից շատերն՝ փոխանակ իւրեանց ունեցած հիւանդութիւնից բժշկուելու, ենթարկվում են մի այլ ցաւալի և անբուժելի հիւանդութեան

որպիսին է ուղեղախտն կամ հոգեկան այլ հիւ-
ւանդութեանց մի տեսակին :

Խօսքս ընդհանուրին համար չէ. կան շատ
դատարկապորտներ էլ որ բնաւ փոյթ չունին,
և շատ գոհ և ուրախ կը լինեն, եթէ թոյլ
տրուէր իրանց ընդ միշտ հիւանդանոցում
մնալ: Հիւանդանոցի վարչութիւնը ամենայն
տեղ կարգ ու կանօնի և օրինաց գծադրած
այլ պահանջների պահպանման և ճշդիւ գոր-
ծադրութեան մասին մեծ հոգ ու աշխատանք
ի գործ են դնում, օրինակ այս ինչ ժամին
նախաճաշ, այն ինչ ժամին ընթրիք, այս ինչ
ժամին բժիշկների այցելութիւն: Երբ համար,
ցաւօք սրտի պէտք է ասած, որ ընդհանրա-
պէս մի հասարակ սովորութիւն կամ աւելի
հասկանալի լեզուով ասած, մի կատարեալ
ձեւաբանութիւն է, քան թէ մի իսկական
օգուտ և արդիւնք յառաջ բերելու ջանք
կամ աշխատանք: Մաղթենք որ Աստուած
խիղճ տայ այդ տեսակ արարածներին: Կա-
րեկցութեան արժանի այսպիսի խեղճ և ու-
ղորմելի հիւանդներն երբ տեսնում են իւր-
եանց յուսախաբութիւն, այնուհետեւ ընկը-
մում են մոռածմունքի անդունդն և հետզհե-
տէ և անզգալի կերպով ենթարկւում են մի
տեսակ մեղամաղձային վիճակի և հոգեկան
անհանգստութեան որի հետեւանքը շատ ան-
գամ կորստաբեր և աղետալի է լինում: Հէնց
անցեալ կիրակէ Ս. Ժօրժ հիւանդանոցում
մի 22 տարեկան բաւական զարգացած երի-
տասարդ՝ որը երկար ամիսներից իւր ցաւե-
րին մի օգուտ տեսած չէր, վեր է առնում
մի դանակ որպէս թէ հաց կտրելու, և ահա՛
կտրում է ամենայն սառնասրտութեամբ իւր
վիզն, առանց սակայն իւր իսկական և կա-
տարեալ նպատակին հասնել կարողանալու,
որովհետեւ սրահի սպասուհին անմիջապէս և
կայծակի արագութեամբ վերայ գալով յա-
փըշտակում է դանակն, և իսկոյն ներքին
բժիշկին և օգնականին ետեւից ուղարկում է,
որք շտապելով գալիս են և կարում անբաղ-
դի վէրքն: Գ. Ս. Ա.



ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐԱՊԵԴ ԿԻՆԵՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու
արդոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ
գնած ենք Տարապեդ-Կինէնայի Հայկական փուռը
և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր
գործառնութիւնները: Այլ փուռին գործերու եղա-
նակին մէջ խնամոտ բարեկարգութիւններ ներմու-
ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունե-
վուռի վրէ պէս լիովին գոհացնել իրենց վատահո-
րեամբ զմեզ պատուող յաճախորդները:

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինք
զմեզ պիտի բաջալերեն մեր այս ձեռնարկին մէջ:
Ս. Զուրիկեան եւ Նղբարհ Հացագործեան
2—15

Ա. Զ. Դ.

Սամուէլ Գուրեան անուն երիտասարդը որ
վերջերս Լոնտոնէ վերադարձած է, պատրաստ է
անգղիերէն դասեր տալ թէ տեսական և թէ գործ-
նական: Փախազողք զինքն Բարեգործական ընկե-
րութեան արճարանը:
3—4

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս
Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-
հրէ հաստատուած է և մեծապէս գոհ թու-
ղուցած իր յաճախորդները, այս անգամ իր
նոր խանութին մէջ (Աթապա էլ Խառա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրու-
թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ. մաք-
րութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ
ածիլման և թէ վարսայարդարութեան մասին:

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷՓԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիներով:

Ամեն մեծութեան ԱՅՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ
9—10

PHARMACIE DE LA POSTE

ԳԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-
րաններէն ընտրած թարմ դեղեր, չափաւոր գիներով:
Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիպիլներ:
Թարմ հանգալից ջուրեր, անուշահոտ քիւնք եւն.
Բնական տկան և մանրադիտական քննութիւն:
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց
համար:
35—50

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՄԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ. ԿԱՐԴԿԷ արանց և կանանց
շապիկներ, չրջագոտաններ, ևն. մաքրութիւն,
ճշգրտահոգութիւն, և խիստ չափաւոր գին:
6.—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.	1 2 կգ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—	—	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—	—	—
	մեկ.	11 48	—	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—	—	—
Տամանհուր	»	3 10	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—	—	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	5 50	—	—	—

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Խառն		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	2 30	—	4 15	—	6 15	—	11 —	—
Տամանհուր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—
Թանթա	ժամ.	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Գահիրէ	ժամ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՑԱՐԱՆՔ		ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՑԱՐԱՆՔ		ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	երեկոյ	1 20
Ջակադիկ }	ժամ.	1 34	8 54	Խամաիլիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4		»	»	—
Խամաիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Ջակադիկ)	ժամ.	3 7	8 53
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	»	մեկ.	3 17	9 3
	մեկ.	—	—		»	»	—
Տաբ (բարափ)	ժամ.	6 55	—	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
	մեկ.	—	—		»	մեկ.	4 17
Գահիրէ	ժամ.	—	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 25